

ՄԱՆՈՒՆԻՍ ԶԵՐՈՒԹԻՒՆԸ ¹⁾

Ասորեստանի թագաւորներն իրանց արշաւանքներէ և տիրապետութիւնների մասին մեզ բաւականին տեղեկութիւններ են տալիս: Դրանց տուած տեղեկութիւններում ի միջի ալլոց լիշատակում են մի շարք զանազան տէրութիւնների անուններ: Վերոյիշեալ տէրութիւններն ալլ տեղեկութիւնների համեմատ վասալական իշխանութիւններ են եղել: Ասորեստանի թագաւորները զժբաղդաբար իրանց վասալական իշխանութիւնների մասին մանրամասն չեն խօսում, ալլ բաւականանում են միայն մի քանի թագաւորների և տեղերի անուններ լիշելով: Բայց ուրախային այն է, որ ալլ տէրութիւնների մասին ուրիշ աղբիւրներ էլ ունինք: Վերջին տեսակ աղբիւրների թուին են պատկանում և հին կտակարանի մանաւանդ մարգարէների գրքերի տուած տեղեկութիւնները: Օր. ըստ ասութեան հին կտակարանի՝ Ասորեստանի հիւսիսային և հիւսիսարեւմտեան կողմերում Արարատի զօրեղ տէրութիւնն է գոյութիւն ունեցել: Այդ Արարատի կամ Ուրարգուի (ասորեստանցիների կոչելով) տէրութեան արձանագրութիւններից մենք իմանում ենք, որ Ասուրի թագաւորութիւնն է գէմա ալլ տէրութեան մի զօրեղ հակառակորդ է

¹⁾ Արտից երկու տիպ առաջ Քերկում Բաւեան, Վերիով և Կաւ Էշանուր գիտնականների խնդրական մանածագրի առաջնորդութեամբ հրատարակող «Zeitschrift für Ethnologie» արտիկն տեղադրութեան անգղիսում լոյս տեսաւ: Կայսերի թաղ Ժանով Էշանուր քիմիկոս-տիկնուրդ-Վազգա զօրեղ Կալքիմար Քլայրի գտածական այս Էշանուր ուսումնասիրութիւնը, որի վերնագիրն է «Das Reich der Mannäer» արտիկն միանկիւնաց ալլութիւնը: Այդ հանգիսը, որտեղ վերայիշեալ ուսումնասիրութիւնն է լոյս տեսել, Ենքմանիայի ժողովրդական, քնդարդական և Վազիտական ակննակչանուր ակադեմիէն է: Քիչ շարագրութեան նպատակն է այդ ուսումնասիրութեան նախն կիտերի նեա Կայ Էնքիլլիզդիւնի ակադեմի կնդով Ժանովայնի:

ունեցել, որին Ասորեստանն իսպառ չկարողացաւ կործանել, թէկուզ Յիզիաթ-Պիլիսար Գ. և Սարգոնը զբան մի քանի անգամ ծանր հարուածներ տուին: Այդ զօրեղ Ուրարդի տէրութիւնն ըստ իւր սեպհական արձանագրութիւնների կոչուած է Բիանիա կամ Խալդիա: Մենք գիտենք որ Ուրարդու տէրութիւնը մօտ երկու զար իւր զօրութիւնն անփոփոխ կերպով պահպանեց. բայց հաւանական է, որ այդ զօրութիւնն Հնդկա-Գերմանական Հայերի արշաւանքի շնորհիւ խորտակուեց: Ուրարդու տէրութեան 12 թագաւորներէ անուններիցուցալը մեզ յայտնի է: Դրանք են. Լուսիպրիս, Սարգուր Ա, Խալուինիս, Մենուսս, Արգիտափս Ա, Սարգուր Բ, Ռուզաս Ա, († 714 թ. Ք. ա.) Արգիտափս Բ, Ռուզաս Բ, Էրիմենաս, Ռուզաս Գ և Սարգուր Գ: Եստ հաւանական է, որ նոր ուսումնասիրութիւնների շնորհիւ Ուրարդու-Խալդիա տէրութեան պատմութիւնն աւելի ևս պարզուի: Հին կտակարանը մեզ մի ուրիշ տէրութեան հետ էլ է ծանօթացնում. այդ զօրեղ տէրութիւնը Միւննի (Երեմ. ԾԱ. 27) երկրումն էր գտնուում, որը Նիկոլայուս Դամասցենուսը Միւնիաս է կոչում: Ասորեստանի արձանագրութիւններն այս տէրութիւնը Մաննիացոց (Մաննայա) տէրութիւն են անուանում: Խալդիայի արձանագրութիւններն էլ են յիշում այս տէրութիւնը: Յաւային միայն այն է, որ Մաննիացոց ազգի յատուկ արձանագրութիւնները մեզ չեն հասել: Բայց այնուամենայնիւ Ասորեստանի և Խալդիայի արձանագրութիւնները Մաննիացոց տէրութեան պատմութիւնը բաւականին լուսաբանում են:

Ո՛րտեղ էին ապրում Մաննիացիք: Հին կտակարանն այս հարցին չէ պատասխանում, իսկ Ասորեստանի արձանագրութիւններից կարելի է եզրակացնել, որ զբանք Ասորեստանի Հուսիսային կողմում և Ուրարդուի ու Մարաստանի մօտ էին բնակում: Քանի որ Սայսը (Says) Խալդիայի արձանագրութիւնները գեռ չէր ուսումնասիրել, այն ժամանակ մի քանի գիտնականներ կարծում էին, որ այդ տէրութիւնը Վանայ ծովի մօտ պէտք է գտնուի, որովհետեւ նրանք Ման և Վան բա-

աւերի մէջ նոյնութիւն էին փնտաւում: Բայց երբ Սայսը Վանի խաղիթական արձանագրութիւնները գտաւ, այն ժամանակ նա ապացուցեց, որ Մաննիացիք Վանայ ծովի մօտ ապրող Խաղիթերից բոլորովին տարբեր մի ազգ են կազմում և դրանք պէտք է Մարաստանի և Հայաստանի սահմանի լեռների մօտ ապրած լինին: Սայսն այնատուժ էր նորնպէս ապացուցանել, որ դրանք Ուրմիա լճի Հարաւարեմտեան տփում էին բնակում և մօտ էին Պարսուէների (Parssler) երկրին: Նա Վանի արձանագրութիւնների համեմատ նկատում է, որ Մաննիացոց տէրութիւնը Հիւսիսային կողմից տարածւում էր մինչև Խոյ գետան և Բաբիլոս տէրութիւնն այդտեղ սահմանափակում է, արեւմտեան կողմից մինչև Խոթուր-Դադ, որ Ուրարգուի տէրութիւնից բաժանում է, իսկ Հարաւային կողմից տարածւում էր մինչև Պարսուա տէրութիւնը: Բայց Սայսի այս երկու որոշումներն իրար չեն համապատասխանում: Իսկ շատ ասորագէտների կարծիքով Մաննիացոց տէրութիւնն աւելի Հիւսիս էր գտնւում: Ուրեմն գիտնականների Մաննիացոց Հայրենիքի մասին յայտնած կարծիքները միմեանցից շատ տարբերում են: Բայց գերմանացի գիտնական, քիմիկոս-տեխնոլոգ-հնագէտ Բելքը, մի արձանագրութիւն է գտել, որ այդ Հարցի պարզութիւնն շատ է նպաստում: Նա Գերմանիայի Հայլե քաղաքի արևելագէտների ընկերութեան գրադարանում մի արձանագրութիւն¹⁾ է գտել, որի բովանդակութիւնը հետևեալն է. Խաղիթի թագաւոր Մենուաը Մաննիացոց գէմ կատարած իւր մի արշաւանքի մասին է տեղեկութիւն տալիս

¹⁾ Այս արձանագրութիւնը բազմաթիւ է 24 աղջի և դիւարը կտորը հետեւան է՝

[9. 1] (Բոյ) Խաղիթի մայրաքաղաքի [9. 2] Մենուա [1] Խաղիթի մայրաքաղաքի [9. 3] ինչ է. Կալ. քաղաքի [7] [9. 4] (Այլ) Միլլատա.... [9. 5] Կալիթի (Կալիթ) Մալիթի.... և այլն: Այս բանից թուրքմանութիւնն այսպէս է.

[1.] Զաւրի Խաղիթի նաւոր [2] Մենուաը, Խաղիթի մայրաքաղաքի [3.] այս պալատը լինել է [7] [4] Մէջ (մօտ?) քաղաքի Միլլատա.... [5] ևս անպիշ [7] երկրը Մաննիացոց նաւնի է և այլն: Արձանագրութեան շարժականութիւնն այսպէս է. [9. 6] Մենուա [1] աղի է [9. 10] Կալիթի (Կալիթ) Ման (Կի) և այլն: Թարգմանութիւնը—Մենուաը խոսում է, եւ Մաննիացոց երկրը նաւնի եմ և այլն: Կատարել է, որ այս արձանագրութեան մէջ բոլոր ժաննիական մի բանի թարգմանիցն ուղիւ երկրներն չեն լինում:

և տեղացեալ է, որ ինքն այդ նուաճած երկրում Թաշթէ-
պէ ժայռերի վրայ մի պալատ է շինել տուել: Ինչպէս երե-
ւում է այդ վերոյիշեալ արձանագրութիւնը Մաննիացոց երկը-
րում գտնուած Թաշթէպէի արձանագրութիւնն է, որ այդ
երկրի աշխարհաշրջանի մասի հարցը բաւականին լուսաբա-
նում է: Մենք հաւանականութեամբ կարելի է ընդունել, որ
ափրապետոյ թագաւոր Մենուան իր պալատը ոչ թէ Ման-
նիացոց տէրութեան սահմանում պէտք է շինել տուած լինի,
ալ այդ տէրութեան կենդրոնին բաւականին մօտ մի տեղում:

Ընթերցողին պէտք է յայտնի լինի, որ Մաննիացոց եր-
կրն Ուրմիա ծոցի հարաւային, հարաւարեւելեան և հարա-
ւարապէս Թաշթէպէն էր: Նորից մի հարց է ծագում, թէ
արդեօք Մաննիացիք միշտ միեւնոյն տեղն են ապրել և եթէ
ոչ, երբ և որտեղից են նրանք նուաճելով այդտեղ մտել:
Ասորեստանի և Խալդիայի արձանագրութիւնների ուսում-
նասիրութիւնն այդ հարցին հեշտութեամբ պատասխանում
է: Ասուրնասիրարայի և Սալմանասար Բ-ի պատերազմական
տեղեկութիւնները բաւականին լուսաբանում են Ուրմիա
ծոցի ափերում գտնուող երկրների (Ք. Ճ. ա.) Զ-րդ դարու քա-
ղաքական գրութիւնը: Այդ ծոցի հիւսիսային կողմում մենք
գտնում ենք Դիլցանի տէրութիւնը, Դրանց տուած տեղե-
կութիւններն Ուրմիա ծոցի արեւելեան ափում ապրող ազ-
գութիւնների մասին լուսւմ են, բայց բարեբաղդաբար այդ
թագաւորների մեզ հաղորդած յետագայ տեղեկութիւններում
լիջւում են զանազան ազգութիւններ. օր. Պարսուայի բնա-
կիւնները, Պուստուս ևայլն, որոնց երկրների աշխարհաշրջա-
նան տեղը որոշելը մեզ համար քիչ գծուար է: Նոյնպէս
գծուար է որոշել, թէ արդեօք գրանք Ասուրնասիրարայի և
Սալմանասար Բ-ի ժամանակ այնտեղ նստակիաց էին, թէ ոչ:
Ասուրնասիրարայն Ուրմիա ծոցի արեւելեան կամ արեւմտեան
ափերի երկարութեամբ ոչ մի անգամ չէ գնացել, իսկ Սալ-
մանասար Բ 857 թ. Վանայ ծովից գնաց գէպի Դիլցան,
իսկ այնտեղից էլ գէպի հարաւ Հուպուսկիա. բայց նա չէ

լիշում Քիրբուրին և Յամուան: Այս երկրներով նա անգառ-
նառ անցած կըլինէր, եթէ նա արեւելեան կողմից գէպի Հու-
պուսկիւս գնացած լինէր: Այս տեղեկութիւնից հետեւում է, որ
Գիլցանի հարաւային և Հուպուսկիայի հիւսիսային սահման-
ներն այն ժամանակ կամ միմեանց մասամբ ծածկում էին,
կամ թէ չէ զրանք միմեանցից այնքան հեռու չէին գտնուում:
Գիլցանի մօտ էին Քիրբուրի և Յամուա երկրները, որոնցից
առաջինը հարաւային կողմն էր ընկած և հարեան էր Հու-
պուսկիային, իսկ Յամուան ընկած էր ոչ միայն անմիջապէս
Քիրբուրիի մօտ, այլ և մօտ էր Գիլցանին ու Հուպուսկիա-
յին և Ասուրբանիքալն այդ երկրներէ հարկերը Յամուայումն
էր ստանում: Այս բանը հաստատում է Սալմանասար Բ-ի մի
տեղեկութիւնը: Ինչպէս երևում է՝ Յամուան ընկած էր Ուր-
միա լճի հարաւային և հարաւարեւմտեան կողմերում և տա-
րածւում էր մինչև Նամրի: Այդ մի լեռնային և մասամբ ել
այնպիսի կլիմա ունեցող երկիր էր, որտեղ խաղող էր հաս-
նում, որովհետեւ այդ երկրի իշխաններն Ասորեստանի թա-
գաւորներին հարկի փոխանակ երբեմն էլ գինի էին տալիս:
Այգալիսի մի երկիր էր և Գիլցանը: Քիրբուրին էլ Ուրմիա
լճի հարաւային կողմում պէտք է ընկած լինէ, որովհետեւ
այգառեղի իշխանները նրանց նայնպէս գինի էին վնարում:
Ասորեստանի թագաւորներն իրանց արչաւանքներից լեռոյ
միշտ ստիպուած էին գէպի Քիրբուրի ցած իջնել: Դրանք
Քիրբուրիից Ուշնէի կընով հասնում էին իրանց երկիրը,
Հուպուսկիան մի լեռնային երկիր էր, որի գէմ Աս-
րեստանցիները շատ անգամ իզուր տեղը կուռեցին առանց
մի վերջնական հետեւանքի հասնելու: Այն երկիրը, որտեղ
մենք լեռոյ Մաննիադոց ենք պատահում, Ասուրնասիքաբալի
և Սալմանասար Բ-ի ժամանակ ուրիշ անուն էր կրում և
Ուրմիա լճի հարաւային և հարաւարեւմտեան ափերը միշտ
կոչւում էին Քիրբուրի և Յամուա: Այս երկրներից լեռոյ
Մաննիադի իբրեւ մի պատերազմաւոր և կաւոյ ժողովուրդ
են երևան գալիս: Ասորեստանի թագաւորները սրանց և
Խալդիայի բնակիչներին չեն կարողանում վերջնականապէս

յաղթել, Արեմն պարզ է, որ Մաննիացիք այս վերջին երկու երկրների բնիկ ժողովուրդը չէին կազմում, այլ լեռայ զաղթել էին այստեղ: Դժուար չէ որոշել, թե սրանք երբ և որտեղից զաղթեցին:

Սալմանասար Բ-ը Մաննիացոց լիչում է 830 թ. Ք. Յ. ա. Նա Դայան—Ասուրուն հիւսիսարեւելեան տէրութիւնների վրայ է ուղարկում, որ Յար Հուպուսկիայով անցնում և գէպի Մանի Աթաքի թագաւորի Իցիրգու մայրաքաղաքի վրայ է գնում: Դայան—Ասուրը նուաճում է Պարսուան, որ Աւրիա լճի հարաւարեւելեան կողմում պէտք է փնտաել, իսկ Մանի Աթաքի թագաւորի տէրութիւնը Հուպուսկիայի և Պարսուայի մէջ: Բայց սրանք այն երկրներն էին, ուր նոյնպէս Քերրուրին և Յամուան էլ էին գտնուում: Ասորեստանցիք գէպի հիւսիս արեւելք իրանց ուղղած արշաւանքների ժամանակ սրանց յաղթուած և հարկատու ազգերի շարքումն են թւում: Բայց ինչու Սալմանասար Բ-ը այս տէրութիւններն և իշխանները չէ լիչում: Այդ տէրութիւնները, սրանք Ասորեստանցիներէ տեղեկութիւնների համեմատ մի գաշնակցութիւն էին կազմում, այդ ժամանակ այլ ևս այնտեղ գոյութիւն չուներ և զրանց տեղը բռնել էր Մաննիացոց մեծ տէրութիւնը: Այժմ հասկանալի է, որ Ասորեստանի թագաւորներն իրանց վերջին տեղեկութիւններում Քերրուրին և Յամուան չեն լիչում: Այդ թագաւորների աւանտ տեղեկութիւններում Յամուան վերջին անգամ 856 թ. Ք. Յ. ա. է լիչատակւում, իսկ Քերրուրին վերջին անգամ 857 թ. Ք. Յ. ա. Մաննիացիք զրանց երկիրը պէտք է մտած լինին 856—830 թուականներում: Իսլաղիական արձանագրութիւնները համապատասխան են Ասորեստանի թագաւորների արձանագրութիւններից հանած մեր եզրակացութիւններին:

Թաշ-Թէպէի արձանագրութիւնից երևում է, որ Մաննիացիք ապրում էին Աւրիա լճի հարաւային լեռնային երկրներում, բայց այդ արձանագրութիւնը Յամուայի և Քերրուրիի մասին ոչինչ չէ լիչում: Մենուասի որդի Արգիստիս Ա-ը նոյնպէս զրանց չէ լիչում, այս իշխանը գէպի հարաւ

գնաց և զանազան տեղեր նուաճելով Ասորեստանի սահմանը մտաւ:

Որտեղից եկան Մաննիացիք: Եթէ նրանք հիւսիսից եկած լինէին, այն ժամանակ Գիլյանի տէրութիւնը նուաճած կը լինէին. նրանք չեն կարող նոյնպէս հարաւից եկած լինել, որովհետեւ զրանք Նամրի տէրութիւնը կը նուաճէին, որին Սարգսոն իբրեւ մի կուսասէր տէրութիւն է ներկայացնում: Հաւանական է, որ արեւմուտքից էլ չեկան, որովհետեւ Քիրհի, Հուպուսկիւս և Ուրարդու տէրութիւններն երկար ժամանակ իրանց անկախութիւնը պահպանեցին: Եսա հաւանական է, որ Մաննիացիները արեւելքից (հարաւ կամ հիւսիսարեւելեան կողմից) եկան. այդտեղի նստակեաց ազգերը ստիպուած էին գէպի արեւմուտք զաղթել: Այդ ժամանակ Յամուան և Քիրրուրին փոքրիկ, միմեանց հետ անհաշտ իշխանութիւնների էին բաժանուած և չէին կարող Մաննիացիներին ընդհանուր ոյժով իրանց երկրից զուրս քշել: Հաւանական է, որ Մաննիացիները թալանել են Յամուա և Քիրրուրի երկրների օգտուէտ իրերը: Նրանք այդ երկրները տիրապետելով Ասորեստանի սահմանում մի զօրեղ տէրութիւն կազմեցին: Իրանց հարեանութիւնն Ասորեստանի համար զրեթէ վտանգաւոր էր: Ինչպէս երևում է՝ այդ ժամանակ Հուպուսկիւսն, Յամուան և Քիրրուրին Ասորեստանի թագաւորներին հարկ էին վճարում. միայն Մաննիացիների զօրութիւնն Ասորեստանի համար վտանգաւոր էր: Իրանց և Ասորեստանցիների մէջ անխուսափելի առաջին կռիւը պատահեց 830 թ. այս կռուի մասին Սալմանասար Բ-ի տուած տեղեկութիւններն անաշտ չեն. նրա ասելով Մաննիացիներն այս կռոււմ բոլորովին լաղթուեցան. բայց մենք տեսնում ենք, որ նրանք լառաջ գնալով բաւականին տեղեր տիրապետեցին և մինչև անգամ Գիլյանն իրանց տէրութեան հետ միացրին: Սալմանասար Բ-ը վերջին անգամ, այսինքն 829 թ. Գիլյանի տնունը նորից լիջում է:

Մաննիացիները տիրապետեցին նոյնպէս Անգիա տէրութիւնը: Իրանց հարկատու օտար երկրների ընակիչների մեծ

մասն իրանց հայրենիքում նստակեաց մնացին և ստար
կառավարութեան լծի գառնութիւնները քաշեցին, այն ինչ
գրանց փոքր մասը չկարողանալով այդ լծի գառնութեանը
գիմանալ՝ գէպի արեւմուտք գաղթեց։ Այս բանը մենք հա-
նում ենք Յամուայի իշխանների տուած մի քանի տեղեկու-
թիւններից։ Սալմանասար Բ-ը իւր իշխանութեան չորրորդ
տարում կատարած արշաւանքի մասին տուած տեղեկութեան
մէջ լիշում է, որ նա Բունագիշու կիրճով մտաւ Մացա-
մուա կամ Յամուա և մտեցաւ Նիկգիմայի և Նիկգիարայի
(գերբինիս Շամշի-Ռամանը Միկգիարա է հոչում.) քաղաքնե-
րին։ Այդ քաղաքների երկու իշխանները փայտեայ նուերով
գէպի ծովն (Ուրմիա ծով) են փախչում։ Սալմանասար Բ-ը
քեղքեկներով (ոյխարի կաշուց պատրաստուած նուեր) նրանց
հետեւում և գրանց մէջ ծովային մի պատերազմ է տեղի ու-
նենում։ Սրանից կարելի է եզրակացնել, որ այդ երկու իշ-
խանութիւններն այդ ժամանակ Ուրմիա լճի հարաւային ա-
փից հեռու չեն եղել։ Այս պատերազմը պատահեց 856 թ.
գրանից 33 տարի յետոյ Նիկգիարայի որդի Հիւսինան աւելի
արեւմուտք էր ապրում և Շամշի-Ռամանի իւր երկրորդ ար-
շաւանքի մասին տուած տեղեկութիւնից երևում է, որ Հիւ-
սինա երկիրը Վանայ ծոցից կամ Վանայ Իսպուրինի տէրու-
թիւնից այնքան հեռու չէր գտնուում։

Հետաքրքիր է այստեղ նկատել, որ Ասորեստանի արձա-
նագրութիւններում Ուրարդացիներին կամ Խալդիացիներին
և Մաննիացիներին միաժամանակ ենք պատահում։ Սալմա-
նասար Բ-ի ժամանակ այդ երկու ազգերը պատմութեան տա-
պաւիտէն են դուրս գալիս։ Խալդիայում գտնուած արձանա-
գրութիւններից երևում է, որ այս Խալդի ազգը 80—50
տարի Մաննիացիներից առաջ Վանայ լճի արեւելեան ափում
արգէն նստակեաց էլի։ Եթէ մեզ Խալդիայի մի քանի արձա-
նագրութիւնները յայտնի չլինէին, այն ժամանակ մենք Սալ-
մանասար Բ-ի տուած տեղեկութիւններից կարող էինք հաս-
տատ եզրակացնել, որ Ուրարդի—Խալդիայի պատմական ա-
ռաջին իշխանն Արրամէն, իսկ սրա յաջորդն և որդին Սար-

գուրն (չափ Սարգսյանների Սեդուր) են եղել: Բայց Սարգսյաններն Իսպուկինիսի կամ Ուշպինայի հայրն է եղել: Իսկ երբ մենք Խաչիայի կամ Ուրարգուի ամենահին արձանագրութիւններում Սարգուրի որդի մի ոմն Լուսիպրիսին ենք պատահում, այն ժամանակ այս երկու իշխաններն Արքամէի որդի Սարգուրից առաջ պէտք է իշխած լինին: Արքամէի և որս որդի Սարգուրի մասին մենք գեաւս արձանագրութիւններ չենք գտել և այս բանը զարմանալի չէ: Հաւանական է, որ դրանց մասին արձանագրութիւններ լինին, բայց մեզ գեաւս յայտնի չեն: Բաւական է միայն այստեղ լինել, որ Խաչիայի կամ Ուրարգու մի քանի իշխանները մեզ Ասորեստանի արձանագրութիւններից են յայտնի:

Ասորեստանի և Խաչիայի կամ Ուրարգու արձանագրութիւնները միմեանց հետ համեմատելով՝ կարող ենք Խաչիայի թագաւորների ժամանակագրական կարգով ցանկը կազմել: Այդ ցանկը հետեւեալն է. Լուսիպրիս,—Սարգուր Ա, որս որդի Արքամէ,—Սարգուր Բ,—որս որդի—Իսպուկինիս, որս որդի—Մենուաս, որս որդի և այլն: Ուրեմն եթէ մենք Սարգուր Ա-ին և Լուսիպրիսին իբրեւ Արքամէի անմիջական նախորդները համարենք, այն ժամանակ կ'ստանանք Խաչիայի—Ուրարգու պատմութիւնը մինչև իններորդ դարու սկիզբը (Ք. Յ. ա.):

Մենք շատ ապացոյցներ ունինք կարծելու, որ Մաննիացիներն և Ուրարգիները կամ Խաչերը միմեանցից բաժնորոշին տարբեր ազգեր էին: Ուրարգիների նախնական հայրենիքը Խոթուր-Դադի և Վանայ ծովի միջև պէտք է փնտռել: Լուսիպրիսի որդի Սարգուր Ա-ը իրեն ընամրիի թագաւոր (ասորերէն Նայիրի.) է կոչում և որս յաջողները, իրենց Սուրաս իշխանութիւնն են լինում, որը նման է Թիգլաթ—Պելիսարի Նայիրիի Սուրուրիային:

Մաննիացիներն ինչպէս ասորեստանցիներին, այնպէս էլ Խաչերին յաջողութեամբ զիմագրում էին: Խաչերի Մենուաս, Արգիստիս Ա. և Սարգուր Գ. իշխանները Մաննիացիների գէմ շատ անգամ կռուեցին, բայց չկարողացան զը-

րանց վերջնականապէս նուաճել, նաեւ շատ Մաննիայի իշխանները թէ Խաչիայի իշխաններէց և թէ Ասորեստանի թագաւորներէց միմիայն կախումն ունէին: Ասորեստանի թագաւոր տեղեկութիւններից մենք իմանում ենք, որ Մաննիացիներն ասորեստանցիներից շարունակ քաղաքներ և աւաններ էին խլում, որ. Ասուրբանաթալը լիչում է, որ Մաննիացիներն իւր հայրերի կառավարութեան ժամանակ իրենցից շուրջ քաղաքներ և նոյնպէս Պաղքիի գաւառն են խլել:

Մենք ի գէմս Մաննիացիների մի տխրիւի ազգի հետ գործ ունինք, որ Ուրարդիների կամ Խաչքերի նման բազմաթիւ մանր իշխանութիւնների չէր բաժանուում, այլ հնազանդում էր միայն մի թագաւորի: Ասորեստանի արձանագրութիւնները մեզ Մաննիացիների այգալիսի շատ թագաւորների անուններն են լիչում, որ. Ութաքի, Իրանցու, Ացու, Ուլուսուանու, Ախշերի և Ուալլի: Խաչիայի արձանագրութիւնները լիչում են միայն Մաննիացիների Հացա թագաւորի անունը, որ ժամանակագրական կարգով Ութաքիի և Իրանցուի մէջն է մանում: Ինչպէս երևում է՝ այդ տէրութեան գլխաւոր նահանգներն առանձին կառավարիչների ձեռքովն էին կառավարւում: Սարգոնը գրանցից երեքը լիչում է. Ումիլգիսի Բագաթթին, Յիկիրգալի Միգաթթին և Միսիանգիի Դայուկիւան: Ասորեստանի տեղեկութիւններում Մաննիացիների տէրութեան մայրաքաղաքն Իցիրգու կամ Յիրգու է կոչւում, իսկ Խաչքերն այդ մայրաքաղաքն ամենեւին չեն լիչում, որից մենք կարող ենք եզրակացնել, որ գրանք այդ մայրաքաղաքը ոչ մի անգամ չեն նուաճել: Մաննիացիների տէրութեան վախճանի մասին մենք ոչինչ չգիտենք, բայց հաւանական է, որ դա էլ Խաչքերի տէրութեան նման է. դարու վերջին հնդկա-գերմանականների ներս խուժուելուն կուլ գնաց:

ԼԵՌՈՆ ՔՈՐՈՅԵԱՆ